ՀԱԿԱԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՃԱԿԱՏ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՋԱՆՔԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ՊԱՅՔԱՐԻՆ

(թուրքմեն ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի տիրապետության ժամանակաշրջանը - XV դար)

Արա Պապյան

XX դարի 90-ական թվականների սկզբին, Խորհրդային Միության փլուզման հետևանքով, պատմությունը վերստին ելավ զարգացման բնականոն ուղի: Շինծու գաղափարների պայքարը կրկին տեղը զիջեց պետական կերպավորում ստացած ազգային շահերի գոյամարտին: Նորից երևան եկան հարյուրամյակների կյանք ունեցող և մի քանի տասնամյակ քաղաքական նիրհի մեջ ընկած աշխարհաքաղաքական հակադրություններն ու համադրությունները:

Միջին Արևելքի արդի քաղաքականության մեջ նկատվող խորքային շատ երևույթներ, ըստ էության, արմատներով կապված են Հայաստանում թուրքմեն ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի տիրապետության և քաղաքական պայքարի, Օսմանյան կայսրության վերընթացի, Սեֆյան Իրանի կազմավորման, ինչպես նաև հարակից հարցերի հետ:

XV դարը վճռորոշ ժամանակահատված էր մեր տարածաշրջանում միջպետական քաղաքական և տնտեսական հարաբերությունների կազմավորման համար: Այս առումով, ներկայումս անհրաժեշտություն է դարձել ուսումնասիրել մեր տարածաշրջանում միջազգային հարաբերությունների զարգացման ընթացքը, առանձնակի ուշադրություն դարձնել դրանց ձևավորման ակունքներին, լուսաբանել անցյալի խորքից եկող միտումները, կանխատեսել հետագա զարգացման ուղին:

1. Կարա-կոյունլուների տիրապետությունը Հայաստանում (1400-1467թթ.)

XV դարը *«դառն և վշտալից»* ժամանակաշրջան էր հայ ժողովրդի համար: Հայաստանը դարձել էր *«արեամբ արբած, սուրն ի յարիւնսրն շաղախած»* վաչկատուն ցեղերի միջտոհմային պատերազմների թատերաբեմ [1, էջ 7, 2, էջ 278]:

Այդ դժնդակ ժամանակաշրջանը սկսվեց արևելքցի մեծագույն նվաճողներից մեկի՝ Լենկ Թեմուրի արշավանքներով: 1399-1403թթ. Լենկ Թեմուրը ձեռնարկեց իր երրորդ արշավանքը, որի ժամանակ գրավեց և ավարառության

ենթարկեց բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ Հայաստանը և Վրաստանը [3, էջ 30-31]. *«Իշխանն անօրէն, որդին կորստեան, որ յազգէ խորազմին՝ Թամուր-Լանկ անուանեալ, որ զաշխարհս Հայոց երիցս անգամ կործանեալ էր, եկն կրկին բազում եւ անթիւ զօրօք եւ էառ զաշխարհն Վրաց»* [1, էջ 5]: Այդ նույն ժամանակահատվածում, ընդլայնելով իր նվաճումները, նա առաջին անգամ բախվում է Հայաստանում և հարակից տարածքներում արդեն հաստատված թուրքմեն երկու ցեղերից մեկին՝ ակ-կոյունլուներին, և պարտության մատնում նրան[1]: Ռազմաքաղաքական թատերաբեմում Լենկ Թեմուրի ի հայտ գալը թուրքմենական ցեղախմբերի մեջ առաջ է բերում քաղաքական կողմնորոշման երկվություն՝ թուքմենական ցեղերը հարկադրված էին ընտրություն կատարել. ըստ այդմ, ակ-կոյունլուներն իրենց հպատակությունն են հայտնում Լենկ Թեմուրին, իսկ նրանց ազգակից, սակայն ախոյան կարա-կոյունլուները հակվում են օսմանյան թուրքերի և ջալայիրյանների կողմը [4, c. 15]:

Ձևավորվում են քաղաքական նոր խմբավորումներ. Լենկ Թեմուրին աջակցելու պատրաստակամություն են հայտնում Բյուզանդիայի կայսր Մանուիլ II-ը (1391-1425թթ.) և ճենովացիները: Վճռորոշ ճակատամարտը տեղի է ունենում Անկարայի մոտ 1402թ. հուլիսի 28-ին [5, c. 30]: Լենկ Թեմուրն Անկարայի ճակատամարտում իր 800 հազարանոց բանակով [6, c. 163], գլխովին ջախջախելով օսմանյան 120 հազարանոց բանակը [7, c. 610], պարտության է մատնում սուլթան Բայազիդ I-ին (1389-1402թթ.) *«մականվանված Յըլդըրըմ, (Yildirim) (...) - կայծակ»* և գերում նրան [8, էջ 104, 9, p. 130; 10, c. 97]: Օսմանյան աստղը ժամանակավորապես մթագնում է հայաստանյան երկնակամարում:

Սակայն թեմուրյան տիրապետությունը տևական չի լինում, քանի որ Լենկ Թեմուրի մահից հետո (1405թ. փետրվարի 18-ին) նրա տարացեղ և բազմալեզու հսկայածավալ պետությունը սկսում է արագորեն տրոհվել [11, էջ 2035; 10, c. 99]: Նրա ժառանգների միջև ծայր են առնում գահակալական կռիվներ: Օգտվելով ներտոհմային երկպառակությունից՝ գլուխ են բարձրացնում կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերը:

[1] Թուրքմեն ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղախմբերի միջուկը հանդիսացող վաչկատունները Միջին Ասիայից Հայաստան, Ատրպատական և Հյուսիսային Միջագետք են թափանցել տակավին սելջուկյան արշավանքների օրերին՝ XI-XIIդդ. [*Еремеев Д.Е.,* Проникновение тюркменских племен в Малую Азию, Москва, 1964, с. 2; *Еремеев Д.Е.,* Этногенез турок, Москва, 1971, с. 5]. Նրանց առավել զանգվածային վերաբնակեցումը Հայաստան և հայաստանամերձ տարածքներ տեղի է ունեցել XIII դարում, երբ բազմաթիվ թուրքմենական ցեղեր, քշվելով Չինգիզ-խանի հորդաների կողմից, ապաստանեցին Իրանում, Անդրկովկասում և Հայաստանում [*Агаджанов С.Г.,* Очерки истории огузов и туркмен Средней Азии IX-XIIIвв., Ашхабад, 1969, с. 255]. Այս ցեղերի մեջ էին ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղախմբերը, որոնք էլ XIV-XVդդ. հաստատվեցին, համապատասխանաբար, Տիգրիսի վերին հոսանքներում և Վանա լճից արևելք [Ակ-կոյունլուներ, Հայկական սովետական հանրագիտարան, հ. I, Երևան, 1974, էջ 224]: Ակ-կոյունլու ցեղախմբում իշխում էր բայանդուրի [Фазлуллах ибн Рузбихан Хунджи, Тарих-и алам ара-йи Амини, Баку, 1987, с. 38-39] տոհմը, իսկ կարա-կոյունլու ցեղախմբում՝ բահարլու կամ բալանդուր տոհմը [*Woods J.,* The Aqqoyunlu Clan, Confederation, Empire, Minneapolis & Chicago, 1976, p. 38; *Петрушевский И.П.,* Государство Ак-коюнлу, Советская историческая энциклопедия, т.1, Москва, 1961, с. 306; The Turkmen Dynasties, p. 152 (The Cambridge History of Iran, volume 6 /ed. By Peter Jackson and Laurence Lockhart/, Cambridge, 1993)].

Նախ հաջողությունն ուղեկցում է կարա-կոյունլուներին, որոնք էլ իրենց ավելի քան կեսդարյա (1410-1467թթ.) տիրապետությունն են հաստատում Հայաստանում. *«ՅԱրարաթեան տանէն Հայոց՝ մինչ յԵրզնկայն, ի Մերդին, ի Բաղդատ, ի Սալթանիայ, եւ ի Գանձակ շահաստանն Թաւրէզ, եւ մինչ ի մեծ գետն Քուռ»* [1, էջ 380-381]: Այս նվաճումների հետևանքով կարա-կոյունլուներն արևմուտքից սահմանակից են դառնում իրենց հակառակորդ ակ-կոյունլուներին, և նրանց միջև բախումը դառնում է անխուսափելի [12, p. 26]: Մի քանի տասնամյակ թուրքմեն ցեղերի միջև փոփոխակի հաջողություններով տեղի են ունենում բազմաթիվ բախումներ և պատերազմներ:

Նման իրավիճակում, բնականաբար, նվաճողները զգում էին տերության բոլոր հպատակների, մասնավորապես՝ հայերի, աջակցության խիստ կարիքը: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ *«խորամանկ և բազմահնար»* կաթողիկոս Զաքարիա Գ-ին (1434-1464թթ.) հաջողվում է կարա-կոյունլու Ջհանշահից հավանություն կորզել, *«անոր գերիշխանութեան տակ վերահաստատել Վասպուրականի հին թագաւորութիւնը»* [13, էջ 143]: 1465թ. Զաքարիա Գ-ի հորեղբորորդի Սմբատը Աղթամարում օծվում է հայոց թագավոր: Սմբատը հոր կողմից սերում էր Սեֆեդինյան տոհմից, մոր կողմից՝ Արծրունյաց: Հոր անունն էր Ամիր Գուրջիբեկ, մորը՝ Դունիա խաթուն: Ամուսնացած էր Բեկի խաթունի հետ, որից ունեցել էր որդի՝ Իսկանդեր, Գրիգորիս Աղթամարցու հայրը [13, էջ 144]:

Պատմական այս միջադեպը միանշանակորեն վկայում է, որ հայերը երբեք չէին կորցրել պետականության վերականգնման ձգտումը: Նրանք մշտապես արթուն են պահել քաղաքական ինքնուրույնության հույսը և հավատավորի նման հետևողականորեն գործել այդ ուղղությամբ: Օտարների քաղաքական հարաբերություններում նրանք ոչ միայն կատարողներ են եղել, այլև, քաղաքական հոլովույթի մեջ ընդգրկվածության շնորհիվ, սեփական ազգային շահը հետապնդողներ:

Երկու խոյադրոշ ցեղերի հակամարտությունը հասնում է հանգուցալուծման 1467թ. [14, c. 36]: Այդ տարվա նոյեմբերի 10/11-ին ակ-կոյունլու Ուզուն Հասանը հանկարծահաս հարվածով գլխովին ջախջախում է կարա-կոյունլուների ջոկատը. *«Ուզուն-Հասան զՋհանշէն կոտորեաց»* [15, էջ 260]: Նա գրավում է կարա-կոյունլուների բոլոր տիրույթները և գահանիստը տեղափոխում Թավրիզ. *«էառ աշխարհս եւն զթախթս Թաւրիզ եւ զփաթշահութիւն»* [15, էջ 314]:

Այսպիսով վերջ է դրվում կարա-կոյունլուների պետական և իշխանատոհմական գոյությանը: Ակ-կոյունլուները հաղթող են դուրս գալիս կարա-կոյունլուների դեմ տասնամյակներ տևած հակամարտությունից [16, էջ 377]: Նրանք ստեղծում են լայնածավալ մի տերություն, որում ընդգրկված էր ոչ միայն Հայաստանը, այլև Ատրպատականը, Իրանը և Իրաքը [17, c. 27]:

2. Աշխարհաքաղաքական իրավիճակը ակ-կոյունլուների տիրապետության նախօրեին

1467/68թթ. ռազմաքաղաքական իրադարձությունների հետևանքով Հայաստանում և հայաստանամերձ տարածքների վրա հաստատվում է ակ-կոյունլուների տիրապետությունը: Այս իրողությանը նախորդել էին մի շարք հույժ կարևոր իրադարձություններ, որոնք ի հայտ էին բերել միջազգային քաղաքականության վրա խորապես ազդող նոր գործոններ:

Օսմանյան թուրքերի[1] կողմից Կ.Պոլսի՝ միջազգային առևտրական կարևորագույն մայրուղիների հանգուցակետի ու խոշորագույն նավահանգստի, նվաճումը՝ *«Ի 29. աւուր մայիսի, յերեքշաբաթի օր՝ ընդ արշալոյսն»,* շրջադարձային էր քաղաքակրթության պատմության համար [18, էջ 499]: Այն հարվածի տակ էր դրել եվրոպական ու ասիական մի շարք երկրների կենսական շահերը [19, c. 11]: Դրանով իսկ արմատապես նոր իրավիճակ էր ստեղծվել միջպետական հարաբերություններում: Թուրքերի կողմից Կ.Պոլսի նվաճումը *«պարտութիւնն էր Եվրոպայի»* [20, էջ 541] և *«մեծ անպատվություն էր բոլոր քրիստոնյա տիրակալների համար»* [21, c. 263], քանզի *«անհամար նշխար սրբոցն առ ոտս անաւրինաց կոխան եղեւ, եւ եկեղեցիքն՝ անաւրինաց եղեն բնակութիւն, եւ այլ բազում արհաւիրք եղեն»* [15, էջ 211] ու *«քրիստոնեությունը դարձավ գլխատված մարմին»* [9, p. 141]:

Կ.Պոլսի գրավումից հետո Մուհամեդ II-ը (1451-1481թթ.) ձեռնամուխ եղավ նորանոր տարածքներ նվաճելուն [22, c. 35]: *«Եւ այսպէս բարձին զթագաւորութիւնս եւ զտէրութիւնս բազում ազգաց եւ աշխարհաց. այսինք զՀայոց, զՎրաց, եւ զԱղուանից, եւ զՄարաց եւ զԱսորոց, եւ զԱրաբացւոց, ուստի էր օրինաղիրն իւրեանց, եւ զԵգիպտացւոցն, եւ զՆուպեացն, եւ զՀռոմոց, եւ զՀոնաց, եւ զԲուլղարաց, եւ զՄազքթաց, եւ զԱփխազաց, եւ զՄակեդոնացւոց, եւ զՀիւսիսականաց, եւ զԹաթարաց, եւ զսակաւ ինչ զֆռանկաց, եւ զՊարսից, եւ ընդարձակեալ զթագաւորութիւն ինքեանք միայն տիրապետեցին»* [23, էջ 70]:

Թուրքական այս նվաճումները ահ ու սարսափ սփռեցին ողջ Եվրոպայում. *«կը խռովին եւրոպական տէրութիւնները»* [20, էջ 540]: «*Բոլորին թվում էր, թե ուր որ է թուրքերը կհայտնվեն Իտալիայում»* [24, c. 260]: Նմանօրինակ ըմբռնումը հեղաբեկիչ ազդեցություն ունեցավ համաքրիստոնեական քաղաքական

[1] Օսմանյան թուրքերի նախնիները հոծ խմբերով Փոքր Ասիա են թափանցել XI-XIIդդ. [Османская империя и страны Центральной, Восточной и Юго-восточной Европы в XV-XVIвв., Москва, 1984, с. 8]. Մոնղոլական արշավանքի հետևանքով ստեղծված ապակենտրոն իրավիճակում Փոքր Ասիայի կենտրոնական և արևմտյան մասերում առաջ են գալիս մի շարք բեյլիկներ՝ իշխանություններ: XIII-XIVդդ. այս բեյլիկներից մեկում իր տիրապետությունն է հաստատում Օսմանը (1258-1324թթ.), որի անունով էլ բեյլիկը սկսում է կոչվել օսմանյան: Օսմանյան բեյլիկը XIV-XVդդ. լայնատարած նվաճումներ է կատարում Ասիայում և Եվրոպայում: Կ.Պոլսի գրավումով (1453թ.) ամբողջանում է Օսմանյան կայսրությունում իշխանության կենտրոնացման փուլը [*Жуков К.А.,* Эгейские эмираты в XIV-XVвв., Москва, 1988, с. 144].

մտածողության վրա [25, p. 60]: Աստվածաշնչյան պատկերների վրա խարսխված Սուրբ երկրի ազատագրման գաղափարն աստիճանաբար տեղը սկսեց զիջել թուրքական վտանգին համատեղ դիմակայելու, թուրքերին Եվրոպայից դուրս մղելու և Կ.Պոլիսն ազատագրելու գաղափարին [26, c. 233, 27, p. 66].

11. Երուսաղէմ ես դու կըրկին,
մեծահամբաւ քաղաք Ստամպօլ,
Առ քեզ գայցեն ամենեքեան
ի տեսութիւն փառաց, Ստամպօլ [28, էջ 229]:

Նման դժվարագույն խնդրի իրագործումը պահանջում էր հակաթուրքական բոլոր ուժերի միասնությունը: Բյուզանդական կայսրերը, *«Տեսեալ զյաջողութիւն զինու Օսմանեանց, ահիւ մեծաւ տագնապէր՝ եթե ընդ հուպ կալցին նոքա զԿոստանդնուպօլիս»,* տնական ժամանակ նախանձախնդրորեն հետամուտ էին հակաթուրքական միասնական զինակցության ստեղծմանը [29, էջ 633, 30, էջ 60]: Բյուզանդական կայսրերից ոմանք՝ Հովհաննես V-ը (1341-54թթ. և 1355-76թթ.) 1366 և 1369թթ., Հովհաննես VII-ը (1390-91թթ.) 1391թ., Մանուիլ II-ը (1391-1425թթ.) 1399-1403թթ., Հովհաննես VIII-ը (1425-48թթ.) 1437թ., թուրքական նվաճումներից անհանգստացած, անձամբ էին ուղևորվել Արևմուտք՝ համախմբելու և կազմակերպելու հակաթուրքական զինակցություն [31, c. 134]:

Թեև համահավաք ուժերով թուրքերին դիմադրելու և նրանց ստեղծած խոչընդոտները վերացնելու հարցն ուներ տնտեսական և քաղաքական միջուկ, այնուամենայնիվ, էական էր նաև կրոնական գործոնը: Թուրքական նվաճումներն ուղղակի հարված էին միասնական, կամ գոնե այդպիսին համարվող, քրիստոնեական եկեղեցու ազդեցության ոլորտին, քանզի Ֆլորենցիայի ունիայով[1] (1439-1472թթ.)[2] ուղղափառ ու կաթոլիկ եկեղեցիները միավորված էին Հռոմի պապի գերիշխանության ներքո [32, cc. 33-34]. *«Քահանայապետ ՛ի հռովմ եւգինէոս չորրորդ. որոյ ցանկացեալ ոչ միայն զազգն յունաց, այլեւ զամենայն եկեղեցիս քրիստոնէից ՛ի մի միաբանութեան վերածել, փոյթ կալաւ ժողով մեծ գումարել յիտալիա՝ կոչելով անդր եւ զարեւելեայս»* [33, էջ 80]:

Հայ իրականության մեջ համընդհանուր թշնամու դեմ միասնական պայքարի գաղափարը նույնպես գալիս էր դարերի խորքից [34]: Միջնադարյան Հայաստանում *«յառաջատես»* [35, էջ 85] տեսիլների, մարգարեությունների ու գուշակությունների տեսքով տարածուն և շրջուն էին այն տրամադրություն-

[1] Հայերի կողմից Ֆլորենցիայի եկեղեցաժողովին մասնակցելու համար ընտրված էին Կաֆայի առաջնորդ Սարգիս վարդապետը (պատվիրակության ղեկավար), Հովակիմ եպիսկոպոսը, Մարկոս վարդապետը, Թովմաս վարդապետը [*Չամչյանց Մ.,* Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1984, էջ 475: Ավելի հանգամանալից Ֆլորենցիայի ժողովի մասին տե՛ս *Եսայի Գռուզեան,* Փլորենտիոյ տիեզերական ժողովը, Բազմավէպ, 1939, թիւ 3-5, էջ 153-163; թիւ 11-12, էջ 295-300; 1940, թիւ 8-12, էջ 147 - 156]:

[2] 1439թ. Ֆլորենցիայում ստորագրված *«Միության կոնդակը» քաղաքական խորքից զուրկ չէր ու «հույները և նրանց կայսրը կառչում էին եկեղեցիների միությանը՝ ոչ թե կրոնական պահանջից դրդված, այլ թուրքերի դեմ Արևմուտքի օգնությունը ապահովելու հույսով»* [*Հովհաննիսյան Աշ.,* Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Երևան, 1959, էջ 7-8]:

ներն ու ակնկալությունները, ըստ որոնց՝ *«լրումն (...) ժամանակի փրկութեան թորգոմեան ազգիս»* [36, էջ 56] կգան հավատակից քրիստոնյաները, որպեսզի.

963. Մաքրեն զաշխարհս բովանդակ,
յանհաւատից առնեն դատարկ,
964. Զմահմետական՝ ազգ հասարակ,
առնուն յաւար և յասպատակ... (...)
975. Տիրեն ամէն երկրի ծագաց,
եւ ընդհանուր կողմ աշխարհաց
976. Քրիստոնէից՝ հանուր ազգաց
փրկիչ լինին՝ յանօրինաց [37, էջ 129-130]:

Պետականազուրկ հայ ժողովրդի ծանր կացությունն էլ ավելի էր խորացրել հայերի հավատը հավատակիցների օգնությամբ ազատագրվելու գաղափարի նկատմամբ[1], և նրանք, *«ինչպես հոգիները քավարանում սպասում են Քրիստոսի գալստյան»* [38, էջ 18]:

Այսպիսով, թուրքերի կողմից Կ.Պոլսի նվաճումը (1453թ.) վերարժևորեց երուսաղեմակենտրոն արժեքների համակարգը՝ առաջ մղելով Կ.Պոլսի ազատագրման գաղափարը և համաքրիստոնեական քաղաքական մտածողության մեջ սկզբնավորեց նոր փուլ:

Ռազմաքաղաքական մյուս կարևոր իրադարձությունը, որն էապես փոխեց ուժերի հարաբերակցությունը և առավել կարևորեց ակ-կոյունլուների պետության դերը, ինչպես նաև նոր աստիճանի բարձրացրեց եվրոպական երկրների հետ այդ պետության համագործակցությունը, 1461թ. Տրապիզոնի կայսրության նվաճումն էր թուրքերի կողմից.

Երթայ ի Տրապիզուն
եւ զպետ նորա ձերբակալեալ [39, էջ 107]:

Թուրքական նվաճումներն, ըստ իտալացի ժամանակագիրների, *«սարսափ առաջ բերեցին օսմանյան աճող հզորության հանդեպ»* [39, էջ 162-163]: Թուրքական հարձակման ահագնացող վտանգը դարձել էր եվրոպական բազմաթիվ պետությունների քաղաքականությունը ձևավորող կարևորագույն գործոնը[2]:

[1] Հայերն իրենց էական դեր էին վերապահում համաքրիստոնեական պայքարում: Այդ մասին է վկայում Ռուբրուքը. *«Սկյութացիք հիւսիսային կողմից դուրս գալով՝ պիտի գային նուաճէին բոլոր երկիրը մինչեւ հարաւ, ինչպես նաեւ Կոստանդնուպոլիսը: Այս քաղաքի մէջ նոցա թագաւորը պիտի ընդունէր քրիստոնէութիւնը, եւ ապա ցոյց տար Երուսաղէմի փրանկներին թէ ինչպէս պիտի յաղթեն թաթարներին: Փրանկները Հայոց օգնութեամբ Մոնղոլներին յաղթելով՝ պիտի երթայն իրենց դրօշակները կանգնէին Թաւրիզի պարիսպների վրայ, եւ անհաւատների կատարեալ դարձ գալուց յետոյ խորին խաղաղութիւնը պիտի թագաւորէր աշխարհի վրայ»* [Գատտէյրաս, Եւրոպայի ճանապարհորդները Հայաստանում ԺԲ դարուց մինչև ԺԷ, էջ 79// Փորձ, 1880, 10, էջ 74-91]:

[2] Նախընթաց ժամանակաշրջանից ահագնացող թուրքական վտանգի և դրան հակազդող դիվանագիտական քայլերի մասին տե՛ս *Фионова Н.А.,* Столкновения Венеции с турецкой опасностью в первой половине XIV века //Страны Средиземноморья в эпоху феодализма, Выпуск 2, Горький, 1975, сс. 89-107.

Այդ գործոնը XVդ. Եվրոպայի քաղաքականության մեջ պայմանավորեց երկու, գրեթե իրարամերժ, հոսանքների առաջացումը: Առաջին հոսանքին պատկանում էին այն երկրները, որոնք կամ որոնց շահերը ենթակա էին թուրքական անմիջական նվաճումների վտանգին: Սրանք թուրքերի դեմ պայքարի կողմնակիցներն էին: Այս երկրների թվին էին պատկանում Վենետիկի հանրապետությունը, Հռոմի կրոնական իշխանապետությունը՝ *«արևմտյան դիվանագիտության գլխավոր շտաբը»*, Ավստրիան, Հունգարիան, Իսպանիան, Նեապոլի թագավորությունը և այլն [40, c. 45, 41, c. 31]:

Երկրորդ հոսանքի մեջ ընդգրկված էին թուրքական սպառնալիքից հեռու երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Հոլանդիան և այլն: Սրանց համար թուրքական վտանգն էական չէր: Ավելին, թուրքական վտանգը, կլանելով Եվրոպայի հարավարևելյան և հարավային պետությունների ուժերն ու միջոցները, վտանգազերծ երկրներին հնարավորություն էր տալիս վտանգված երկրների հաշվին ուժեղացնել սեփական դիրքերը:

Համատեղ ուժերով թուրքերի նվաճումներին դիմակայելու հարցում եվրոպական աշխարհիկ պետություններից առավել գործունը և հետևողականը Վենետիկի հանրապետությունն էր և իտալական մի շարք այլ քաղաք-պետություններ [42, c. 79; 43, c. 24]: Դա պայմանավորված էր նախընթաց ժամանակաշրջանում ձևավորված քաղաքական և տնտեսական հարաբերություններով:

Առանձնապես ընդգրկուն էին նրանց տնտեսական կապերը[1], որոնք Արևելքում գերակայություն էին ձեռք բերել սկսած XII-XIIIդդ. [44, c. 264]: Իտալական երեք քաղաքներ՝ Ճենովան, Վենետիկը[2] և Ֆլորենցիան, ունեին Եվրոպայում ամենամեծ առևտրական տորմիղները [45, c. 36]: Նրանք արևելքից Եվրոպա էին ներմուծում մետաքսի մեծաքանակ հումք, որը մշակելով՝ արտահանում էին համաեվրոպական շուկա [46, c. 28-29; 47, c. 142]: Մետաքսի հումքի հիմնական մատակարարը Իրանն էր, հատկապես Ղարաբաղը և դարաբաղամերձ տարածքը. *«Դաշտագետնէն մեծ գետ մը կ՚անցնի, որ Կուր /Chur/կը կոչուի (...) այս գետին մօտ, նոյն երկրին լաւագոյն մետաքսը կայ: Անհաւատները իրենց լեզուով Ղարաբաղ /Karawag/ կը կոչեն այս դաշտագետինը: Թէեւ հայկական հող է, սակայն անհաւատներու ձեռքին է»* [48, էջ 239]:

Իտալական քաղաք-պետություններից ամենագործունը Վենետիկն էր:

[1] Արևելքի հետ առևտրական հարաբերությունները կենսական նշանակություն ունեին Արևմուտքի համար: Միջնադարյան Եվրոպայում անասունի մորթը տեղի էր ունենում ուշ աշնանը, երբ կերի պակասի պատճառով անհնար էր դառնում մեծաքանակ նախիրների ձմեռումը: Միսը տակառների մեջ աղ էին դնում և ապխտելու համար օգտագործում էին մեծ քանակությամբ պղպեղ, կոճապղպեղ, հիլ, մեխակ, դարչին: Բոլոր այս համեմունքները հնարավոր էր ձեռք բերել միայն Արևելքում [*Магидович И.П., Магидович В.И.,* Очерки по истории географических открытий, т. I, Москва, 1982, с. 184; *Кулишер И.М.,* История экономического быта Западной Европы, т. 2, Москва-Ленинград, 1931, с. 21-22].

[2] Վենետիկի հանրապետությունն իր հզորության ժամանակաշրջանում՝ 14-րդ դարում, ուներ 3300 նավ և 36 հազար ծովային [*Steven E. Plaut,* The Middle East and the Venice Model of Development, p. 76. Mediterranian Quarterly, Summer, 1966, pp. 72-86].

Վենետիկցիները՝ այդ *«ամենամեծ և ամենաուժեղ առևտրական ազգը»* [49, p. 76], եվրոպացիներից առաջինն էին, որոնց Հռոմի պապի հատուկ կոնդակով արտոնված էր առևտուր անել մուսուլմանների հետ: Արևելքի հետ առևտուրը կենսական նշանակություն ուներ Վենետիկի համար, քանի որ առևտուրն էր Վենետիկի տնտեսության առաջատար և որոշիչ գործոնը [45, c. 32]:

Ըստ այսմ, Վենետիկի հանրապետությունը, աչքի առաջ ունենալով իր վտանգված շահերն արևելքում և թուրքական ներխուժման մշտառկա վտանգը, հանդես էր գալիս որպես հակաթուրքական զինակցության նախանձախնդիր: Վենետիկը միակ ծովային ուժն էր, որ ի զորու էր կասեցնել թուրքական ծավալապաշտությունը դեպի Եվրոպա:

Այսպիսով, թուրքական նվաճումների հետևանքով ի հայտ եկած ռազմաքաղաքական նոր իրավիճակն ու դրանով պայմանավորված տնտեսական հսկայական կորուստները, ինչպես նաև քրիստոնեական հոգևոր մարմնին հասցված չսպիացող վերքը դիվանագիտության մշտահոլով հարց դարձրին հակաթուրքական զինակցություն ստեղծելու գաղափարն ու դարերի համար նախանշեցին շատ երկրների արտաքին քաղաքականության մայրուղին:

Մյուս հանգամանքը, որն աշխարհաքաղաքական նոր իրավիճակ էր ստեղծել միջազգային հարաբերություններում և նախադրյալներ ստեղծել ուժերի վերադասավորման համար, ակ-կոյունլուների պետության դիրքերի ուժեղացումն էր և նրա միանշանակ հակաթուրքական դիրքորոշումը: Տրապիզոնի կայսրության անկումից հետո հակաթուրքական պայքարի կենտրոնն արևելքում տեղափոխվել էր ակ-կոյունլուների արքունիք[1]: Դա պայմանավորված էր մի քանի հանգամանքներով. ակ-կոյունլու գահակալ Ուզուն Հասանն իրեն, իրավացիորեն, համարում էր Տրապիզոնի կայսրերի[2] ժառանգորդը: Ակ-կոյունլուները առնվազն չորս սերունդ կոմնենոսների հետ սերտ ազգակցա-

[1] Ըմբռնելով Տրապիզոնի կայսրության հույժ կարևորությունն իր պետության համար՝ Ուզուն Հասանը մի վերջին անգամ փորձ էր արել թուրքերին հետ պահել Տրապիզոնը նվաճելուց: Նա մորը՝ Սառա խաթունին, դիվանագիտական առաքելությամբ ուղարկել էր Մուհամադ II-ի ռազմական, սակայն արդյունքի չէր հասել [*Петрушевский И.П.,* Государства Азербайджана в XV веке, с. 172 // Сборник статей по истории Азербайджана, вып. I, Баку, 1949, сс. 153-213].

[2] Տրապիզոնի կայսրությունը որպես անկախ պետություն հանդես է եկել 1204թ., ի հետևանք խաչակիրների կողմից Կ.Պոլսի գրավման: *«Ալէքսիոս կոմնենոս յամի տեառն 1204, ֆռէնկներն Ստամպօլ առնելէն ետեւ կայսր կոչվեցաւ Տրապիզոնի»* [*Բժշկեան Մ.,* Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 63:] Այն հիմնականում բնակեցված էր հայերով, հույներով և լազերով: Տրապիզոնի կայսրության առաջին գահակալն էր բյուզանդական կայսր Անդրոնիկոս I Կոմնենոսի (1183-1185թթ.) թոռը՝ Ալեքսիոս I-ը (1204-1222թթ.): Տրապիզոնի հունական տիրակալներն ունեին կայսեր կոչում, քանի որ բյուզանդական կայսրերի ազգակից ճյուղն էին. *«Անցյալ ժամանակներում այդ տեղի իշխանը կայսր տիտղոս է ունեցել, որովհետև նա Կ.Պոլսի կայսեր եղբայրն էր, և ինքն էլ պետք է որ կոչվեր կայսր, հետևաբար նրա բոլոր հաջորդները, /թեև նրանք կայսեր եղբայրներ չէին/, այսու ամենայնիվ ըստ սովորության ընդունցին, ավելի ճիշտ հափշտակեցին, այս կայսր տիտղոսը»* [Ուղեգրություն Ջոզեֆա Բարբարոյի (1471-1478թթ.), էջ 195 // *Հակոբյան Հովհ.,* Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 175-214]:

կան կապեր ունեին[1]:

Ավելի կարևոր ու որոշիչ էին տնտեսական շահերը: Դեպի Սև ծով ելք չունեցող ակ-կոյունլուների պետության համար Տրապիզոնը կարևորագույն նավահանգիստ էր ծառայում: Միևնույն ժամանակ, Տրապիզոնից Իրան և ավելի հեռուներ գնացող ճանապարհը, սկսած XIII դարից, կարևորագույնն էր եվրոպացիների համար [50, c.146]:

Ընդհանրապես, օսմանյան վերջին նվաճումներն անմիջական վտանգի էին ենթարկել շատ երկրների կենսական շահեր, քանի որ հավանական հարվածի տակ էին դրել տարածաշրջանով անցնող գրեթե բոլոր ուղիները, այդ թվում՝ Պարսից ծոցից սկիզբ առնող երկու հիմնական մայրուղիները՝ Պարսից ծոց - Բաղդադ - Մոսուլ – Հարպուրտ – Սեբաստիա, այնտեղից էլ Ցինոպ կամ Կ.Պոլիս; Հորմուզ - Սպահան – Համադան – Թավրիզ - Էրզրում – Տրապիզոն [51, p. 116]:

Այսպիսով, Կ.Պոլսի անկումը, Տրապիզոնի կայսրության կործանումն ու ակ-կոյունլուների պետության դիրքերի ամրապնդումը ստեղծեցին այն հիմքը, որի վրա հետագայում զարգանալու էր միջազգային հարաբերությունների մի զգալի մասը:

3. Ակ-կոյունլու Ուզուն Հասանի տիրապետությունը Հայաստանում (1468-1478թթ.)

1467/68թթ. կարա-կոյունլուներին ջախջախելուց հետո Ուզուն Հասանը ձեռնամուխ եղավ ներքին և արտաքին մի շարք կարևոր ձեռնարկումների: Ստեղծելով հսկայածավալ երկիր՝ Ուզուն Հասանն, այնուամենայնիվ, գիտակցում էր իր անզորությունն Օսմանյան կայսրության նկատմամբ, *«վախենալով, որ Օսմանի տան հսկա ուժը ժամանակի ընթացքում կարող է խորտակել պարսկական թագավորությունը»* [52, p. 154]: Այդ իսկ պատճառով նա դիվանագիտական լայն գործունեություն էր ծավալել՝ նպատակ ունենալով ստեղծել հակաթուրքական դաշինք: Նրա ջանքերը համարժեք արձագանք գտան Եվրոպայում: Սկսած Կ.Պոլսի անկումից՝ Հռոմի պապերը և շահագրգիռ եվրոպական երկրներն իրենց դիվանագիտական հարաբերություններում մշտապես տեղ էին հատկացնում Իրանին՝ որպես միևնույն շահերը հետամտող երկրի: Կ.Պոլսի գրավումից չորս ամիս հետո Նիկողայոս Ե պապը կոնդակով նոր խաչակրաց արշավանքի կոչ արեց *«թուրքաց սուլթանի, այդ երկրորդ Սենեքերիմի»* դեմ [53, էջ 28]: Նա բազմաթիվ նամակներ հղեց Եվրոպայի գահակալներին: Նրան հաջորդած Կալիքստուս III պապը դիվանագիտական կապեր է

[1] Այլադավանների և օտարների հետ ամուսնության երևույթն այնքան տարածված էր միջնադարյան Արևելքում, որ գիտության մեջ այն բնորոշվում է հատուկ տերմինով՝ *«քսենոգամիա»* [*Еремеев Д.И.,* Этногенез турок, Москва, 1971, сс. 111-112].

հաստատում Ուզուն Հասանի հետ [27, p. 71]: Նիկողայոս V Հռոմի պապը (1447-1455թթ.) 1454թ. Լուդովիկո դը Բոլոնյային (Լուդովիկոս Բոլոնացուն) ուղարկել էր Իրան, Եթովպիա և Հնդկաստան՝ հակաօսմանյան պայքարում ստանալու այդ երկրների տիրակալների աջակցությունը [54, c. 35]: Նույն 1454թ. Վենետիկը Ղարամանիայի բեյլիկի (Խարամնի երկրի)[1] հետ հակաթուրքական դաշինք էր կնքել [27, p. 205]: 1455-1458թթ. Լուդովիկո դը Բոլոնյան նոր պապի՝ Կալիքստոս III-ի (1455-1458թթ.), հանձնարարությամբ եղել էր Եթովպիայում և Պարսկաստանում: 1458թ. Լուդովիկո դը Բոլոնյան երրորդ անգամ է ուղևորվում Արևելք՝ *«հույների, հայերի, մարոնիտների, բաբելոնցիների մոտ»* [54, c. 143], ինչպես նաև *«Ս. Երկիր, Ալեքսանդրիա, Վրաստան և Տրապիզոն»*՝ նպաստելու նրանց միջև դաշինքի կնքմանը [54, c. 143]: Հակաթուրքական զինակցության անդամների թվում էին նաև Փոքր Հայքի Բերդի բեկը, Խույթի և Սասունի ժողովրդապետությունները, որոնցից էլ որպես բանագնացներ Եվրոպա են մեկնում երկու պատվիրակներ՝ Հեթում և Ռուբեն անուններով [55, էջ 57]: Հունգարիայի և Գերմանիայի վրայով նրանք հասնում են Հռոմ, ապա անցնում են Ֆրանսիա և բանակցություններ վարում Կարլոս VII (1422-1461թթ.) թագավորի ու նրա որդի Լուդովիկոսի (1461-1483թթ.) հետ: Լուդովիկո դը Բոլոնյան մի շարք երկրների տիրակալներից ստանալով նամակներ՝ նրանց դեսպանների ուղեկցությամբ վերադառնում է Հռոմ: Նա այնտեղից դիվանագիտական առաքելությամբ մեկնում է Վենետիկ, Ֆլորենցիա, Միլան, Բուրգունդիա, Ֆլանդրիա և Ֆրանսիա:

Թուրքական նվաճումները և դրա հետևանքով առաջացած դիվանագիտական աշխույժ ձեռնարկումները ծայրահեղորեն լարեցին իրավիճակը և հանգեցրին վենետա-թուրքական պատերազմի (1463-1479թթ.) բռնկմանը: Չնայած Վենետիկի մեծաթիվ նավատորմին (մինչև 3.000 նավ), պատերազմում հաջողությունը թուրքերի կողմն էր: *«Ծնված լինելով պատերազմում և պատերազմի համար»*՝ Օսմանյան կայսրությունը, լինելով պատերազմի մեջ, գտնվում էր իր բնական վիճակում [56, c. 36]: Թուրքերը ոչ միայն հաջող պատերազմ են մղում արևմուտքում՝ գրավելով Էգեյան ծովի կղզիները, այլև պատերազմ սկսեցին արևելքում՝ ձեռնամուխ լինելով Ղարամանիայի նվաճմանը: Արևելքում թուրքերը սկսեցին անմիջականորեն սպառնալ ակ-կոյունլու պետությանը [57, էջ 394]:

Ընդհանուր թշնամու և միասնական շահերի առկայությունն ավելի աշխուժացրին ակ-կոյունլուների պետության և Վենետիկի հանրապետության

[1] Ղարամանիա (Կարամանիա կամ Լարանդա), պետություն Փոքր Ասիայում (1223-1472թթ.), Իկոնիայից հարավ-արևելք. *«սահմանորդ վիճակաց գաւառին Սելեւկիոյ՝ որ ի ձախակողմեան ձորահովիտին Կալիւկադնոսի, ի հիւսիսոյ Չօմագ եւ Ալիպէկ լերանց, եւ յարեւմտից յառաջագոյն տեղագրեալ վիճակին Առակլեաց. ի հիւսիսոյ եւ յարեւմտից սահմանս իւր անելով զայլս ի գաւառաց Լիկայնիոյ, այսինքն Ղոնիոյ»* [*Ալիշան Ղ.*, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 292]:

դիվանագիտական փոխհարաբերությունները՝ նպատակ ունենալով այդ առանցի շուրջ ստեղծել պետությունների զինակցություն: Ուստի, 1464թ. Ուզուն Հասանը Վենետիկ է ուղարկում Մուհամադ փաշայի դեսպանությունը՝ հաղթանակի դեպքում Օսմանյան կայսրության որոշ տարածքներ խոստանալով Վենետիկին [58, էջ 15, 59, c. 9]:

Հայերը, որոնք մեծ մասնակցություն ունեին Տրապիզոնի առևտրում և վենետիկցիների հետ իրենց ձեռքում էին պահում իրանական առևտրի հիմնական մասը, բնականաբար, առաջիններից էին, որ ներքաշվեցին դիվանագիտական փոխայցերի ոլորտը և կարևոր դերակատարում ունեցան այդ ասպարեզում [60, c. 7]:

Հայերի մասնակցությամբ առաջին դեսպանագնացությունը, որի պատմությունն ավանդված է վավերագրերով, Խոջա Միրաքի գլխավորած դեսպանությունն էր՝ մեկնած Իրանից վենետիկցի դեսպան Լաձարո Քուիրինիի ուղեկցությամբ [61, էջ 105]: Խոջա Միրաքը *«հարուստ վաճառական էր բոլոր ապրանքների»* [62, էջ 213] *«ի մեծ քաղաքէն եւ յանուանի շահաստանէն Թաւրիզոյ, զաւակ բարի ծնողաց, ազգաւ հայ եւ հաւատով քրիստոնեայ»* [63, էջ 3], *«ի սմանէ (Ուզուն Հասան) եղեւ պատուեալ սուրբն Միրաք, որպէս ի նախասացեալ թագաւորացն»* [64, էջ 83]: Նրա դեսպանության մասին Կատերինո Զենոն հետևյալն է գրում. *«Ուզուն Հասանի ուղարկած դեսպանները Վենետիկ հասան, որոնք էին Հաճի Մահմեդ (Azimamet), Մուրատ (Morat), Նիկոլո (Nicolo) և Քաֆարսա (Chefarsa), պատկառելի մարդիկ, որոնք մեծ հեղինակություն ունեին թագավորի* (Ուզուն Հասանի) *մոտ, և որոնք մեծ ընծաներ /բերելով/ իրենց տիրոջից, առաջարկում էին զինակցություն և պատվավոր դաշնակցություն կնքել Թուրքիայի և Սուլթանի* (Եգիպտոսի) *դեմ, պայմանով որ վենետիկցիները չթերանան իրենց նավատորմով հարձակվելու երկու իշխանությունների վրա»* [65, էջ 156]:

Ղևոնդ Ալիշանը Մուրատի փոխարեն գրում է Միրատ և նույնացնում Խոջա Միրաքի հետ. *«Սա* (Ուզուն Հասանը) *գրգռված էր նոր դաշնակիցներէն՝ որք սկսան վախըցնել, թէ օսմանեանք կու պատրաստվին իր երկիրը կոխելու, ուզեց կանոնավոր եւ հաստատ բարեկամութիւն եւ օգնականութիւն հաստատել, եւ սկսաւ իր կողմէն դեսպան խաւրել ի Վենետիկ* (1464-1468թթ.), *նախ մէկ երկու պարսիկ, յետոյ աւելի յաջողելու համար ուզեց Հռովմայ ս. քահանայապետի այլ խաւրել. եւ բանիս հարմարագոյն համարեց քրիստոնեայ մի, հայ մի: Այս երկու դեսպանութեանց միանգամայն կատարող հայն՝ կոչուէր Միրատ, իր հաւատարիմ սպասավոր կամ պաշտոնեայն. թուղթն գրուց ի Սուլտանայ ուր էր այն ատեն արքայական աթոռ Բեկին* (Ուզուն Հասան) *յ՛2 օգոստ. 1469 տարվոյ: Միրատայ անունն կրնար Մուրատ ըլլալ, բայց հավանագոյն է որ ըլլայ Միրաք»* [66, էջ 185-186]:

Միրաքի (Մուրատի, Միրաթի) դեսպանությունը Իրանից Վենետիկ է մեկնում 1469թ. և 1470թ. մարտի 7-ին ընդունելության է արժանանում Վենետիկի դոժի կողմից, ներկայացնում է Ուզուն Հասանի նամակները, իտալերեն թարգմանությամբ հանդերձ [66, էջ 186]: Դրանում, իմիջիայլոց, գրված է. *«Ձեր ներկայութեան կը ղրկեն այս նուիրակը եւ հաւատարիմ ծառան, որ Միրաթ կը կոչվի, ազգով հայ: Լրիվ վստահեցէք այն ամեն բանին, որ մեր անունով բերանացիորեն պիտի հաղորդեն ձեզի»* [61, էջ 106]:

Վենետիկցիները *«ընդունեցին առաջարկը և հայտարարեցին, թե միշտ լավ բարեկամներ են եղել թագավորի* (Ուզուն Հասանի) *հետ, և վստահեցրին նրան, թե այս պատերազմը ավելի հաճելի պիտի լինի իրենց, քան ուրիշ պատերազմները, որ իրենք մղել են»* [65, էջ 156]:

Ժամանած դեսպաններից երեքը, այդ թվում և Խոջա Միրաքը, Վենետիկից անցնում են Հռոմ՝ պապի, ապա Նեապոլի թագավորի մոտ, համոզելու համար, որ այս իշխանությունները *«միանան դաշնակցությանը»* [67, էջ 40]: Նրանցից երկուսը շարունակում են ճանապարհը և, ամենայն հավանականությամբ, այցելում նաև Լեհաստան: Մինչ այդ *«դիվանագիտական գործերով Լեհաստանից Պարսկաստան էր այցելել Հակոբ անունով մի լվովցի հայ»* [68, էջ 200]: Ի պատասխան այս այցի, լեհական մի այլ դեսպանախումբ 1472թ. ժամանում է Ուզուն Հասանի արքունիք:

Այդ ժամանակ Լեհաստանի արքա Կազիմիր Յագելոնի քաղաքական խորհրդատուն էր փորձառու դիվանագետ Ֆիլիպ Կալիմախ Բուոնակորսին (Բուոնակորզին)[1]՝ լեհական գրականության մեջ հակաթուրքական ավանդությունների սկզբնավորողը[2]: Լեհական քաղաքական կյանքի վրա նրա ազդեցությունն այնքան մեծ էր, որ Ուզուն Հասանն էական հույսեր էր կապել Լեհաստանը հակաթուրքական զինակցության մեջ ներգրավելու խնդրի հետ: Մինչև իսկ նա 1474թ. հատուկ դեսպանությամբ պատրաստակամություն էր հայտնել իր ավագ դստերը կնության տալ Յագելոնի որդիներից մեկին և որպես օժիտ խոստանում էր նվաճվելիք Բյուզանդական կայսրության տարածքը, քանի որ աղջկա մայրը՝ Դեսպինա Խաթուն-Կատերինեն, Տրապիզոնի կայսեր դուստրն էր, հետևաբար Բյուզանդական կայսրության ժառանգորդը: Սա-

[1] Կալիմախը առաջիններից մեկը ձևակերպեց Լեհաստանի՝ որպես համայն քրիստոնեության պաշտպանի, գաղափարը: Իրանի ներգրավումով Օսմանյան կայսրությունը օղակող հակաթուրքական դաշինքի ստեղծման հարցը նա քննարկման ենթարկեց De his que a Venetis tentata sunt Persis ac Tartaris contra Turcos movendis աշխատության մեջ, իսկ թուրքերի դեմ անմիջական ռազմական գործողությունների հարցը՝ Oratio de bello Turcis inferendo գրքում [*Гейштор А.,* История на службе Юго-восточной политики Речи Посполитой в XV и XVIвв., с. 31 (Россия, Польша и Причерноморье в XV-XVIIIвв., Москва, 1979, сс. 29-39)].

[2] Հետագայում հակաթուրքական տրամադրությունները լեհական գրականության մեջ զարգացրել են Էրազմ Ցիոլեկը, Ս.Օրժեխովսկին, Սեբաստիան Մարշևսկին, Յակուբ Պշիլուսկին, Բարտոշ Պապրոցկին, Քշիշտոֆ Վարշևիցկին, Յուզեֆ Վարշևիցկին, Պյոտր Գրաբովսկին և այլք [*Базыльев Л.,* Польско-турецкие дипломатические связи в XVI веке, сс. 14-15 (Россия, Польша и Причерноморье в XV-XVIIIвв., Москва, 1979, сс. 12-28)].

կայն Ուզուն Հասանի հույսերը չարդարացան: Լեհաստանի արտաքին քաղաքականությունը հիմնականում ուղղված էր Մոսկովյան պետության դեմ, և նշյալ երկու հակամարտ պետություններն էլ շահագրգռված էին ուժերի զուգակշռի պահպանմամբ: Այս իսկ պատճառով հաջողություն չունեցան նաև Հռոմի քայլերը՝ Իվան III-ի (1462-1505թթ.) և բյուզանդական կայսերական տոհմի շառավիղ Սոֆյա (Զոյա) Պալեոլոգոսի ամուսնությամբ (12 նոյեմբերի 1472թ.) [69, c. 166] Մոսկովյան պետությանը հակաթուրքական զինակցության մեջ ներքաշելու գործում [70, c. 165]: Այդ ժամանակ ստեղծվել էր այնպիսի քաղաքական իրադրություն, որ Մոսկովյան պետության համար Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների որևէ բարդացում բնավ ցանկալի չէր:

Լեհաստանից Միրաքը 1474թ. հունիսին անցնում է Ղրիմ, Կաֆայից մեկնում Թինա (Ազով), որոշ ժամանակ անց վերադառնում Թավրիզ: Միրաքի դեսպանության այցից հետո[1] Վենետիկի սենատը 1471թ. սեպտեմբերի 10-ի հրամանով Կատերինե Զենոյին նշանակում է հանրապետության դեսպան Ուզուն Հասանի արքունիքում [58, էջ 130]. *«Ծերակույտը հարմար դատեց ընտրելու մի դեսպան, որ բնակի Ուզուն Հասանի (Ussun Cassano) թագավորի արքունիքում, և որ նա պատրաստ լինի հասարակաց հարձակողականը և պաշտպանողականը, և նույնպես ներկայացնի հանրապետության մեծությունն ու պատիվը: Հետևաբար, նախ Պ. Ֆրանչեսկո Միքելե (Francesco Michele) ընտրվեց, որ մերժեց, հետո ծերակուտականներն ընտրեցին Ջիակոմո դա Մեցոն (Giacomo da Mezo), որ նույնպես չէր կամենում ընդունել այս պարտականությունը: Վերջապես, 1471 տարում, ընտրվեց Պ. Կատերինո Զենո, որ սիրով ընդունեց ճանապարհորդությունը, մղված միայն սուրբ հավատքի եռանդով»* [65, p. 157]. *«Միրաքայ իմացուց՝ որ իրեն փոխարեն Դուքսն ալ դեսպան կու խաւրէ (զԿատերինոյ Ծենոյ), եւ անոր բերանով ամեն բան կու ծանուցանէ: Բայց վախենալով ալ որ ճամբան փորձանաց չհանդիպի, պարսկերեն պատասխան մ՝այլ գրել տուաւ եւ յանձնեց առ Միրաք՝ որ տանի ի տիրոջ»* [66, էջ 188]:

Այս ընտրության հարցում էական դեր էր խաղացել Զենոյի ազգակցական կապն Ուզուն Հասանի կնոջ հետ [58, էջ 16]: Կատերինո Զենոն Դամասկոսում Վենետիկի հյուպատոս Դրագոն Զենոյի որդին էր և ամուսինը Կատերինեի քրոջ աղջկա՝ Վիոլենտի *(Violente)* [65, էջ 154]: Զենոյի դեսպանությունն ուներ քաղաքական նպատակ. *«որպեսզի, եթե չէին կարող ոտքի հանել Արևմուտքի վեհապետներին՝ պատերազմելու հասարակաց թշնամու (թուրքերի) դեմ, որ անկուշտ իր ուժի փառքից ձգտում էր (տիրել) աշխարհի կայսրության, գոնե կարողանան առնվազն համոզել Արևելքի վեհապետներին»* [65, էջ 155]: Վենետիկի

[1] Հավանական է, որ նույն Միրաքը 1483թ. Մոսկվա է ժամանում վրաց Ալեքսանդր թագավորի դեսպանության կազմում [*Ոսկանյան Վ.Կ.,* Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման սկզբնավորման պատմությունից (XV-XVIIIդդ. սկիզբ), էջ 20 (Հոդվածների ժողովածու, XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը, Երևան, 1989, էջ 17-52)]:

կառավարությունն իր կողմից որպես օժանդակություն առաջարկում էր *«հարյուր գոկանավ (galley) և ավելի շատ մեծ ու փոքր նավեր»* [65, էջ 158]:

Այս հանձնարարություններով Զենոն մեկնում է Վենետիկից, մի քանի ամսից հասնում Հռոդոս, մտնում Ղարամանիա և շատ դժվարությամբ հասնում Պարսկաստան: Զենոն *«ուրախությամբ և պատվով»* [65, էջ 160] է ընդունվում Ուզուն Հասանի արքունիքում *«որպես դեսպան այնքան նշանավոր ու հզոր մի հանրապետության, որ իր նոր զինակիցն ու դաշնակիցն էր»* [65, էջ 160]: Բանակցությունների շնորհիվ 1472թ. գարնանը Թավրիզում մի շարք պետությունների միջև կնքվում է ռազմական դաշինք: Հակաթուրքական զինակցությանը մասնակցում էին նաև Հռոմի պապը, Նեապոլը, Հունգարիան, Ալբանիան, Հռոդոսը, Կիպրոսը, Բուրգունդիան և Կարամանիան [71, c. 36]:

Կատերինո Զենոյի դեսպանագնացության արդյունավետ ելքը շատ բանով պայմանավորված էր թագուհու աջակցությամբ. *«Նա (թագուհին) խոստացավ (ի գործ դնել) իր ամբողջ ազդեցությունը, և բարեկամություն ցույց տվավ մեր նշանավոր կառավարության (իմա՝ Վենետիկի) վերաբերմամբ: Եվ իրապես այս թագուհին պրն. Կատերինոյի միջոցով գործիք դարձավ համոզելու համար Ուզուն Հասանին՝ պատերազմ հայտարարելու համար Թուրքին (Սուլթանի) դեմ: (...) Այս Դեսպինան ամենից կրոնասեր կինն էր աշխարհում, միշտ լավ քրիստոնյա մնացած*[1]*, և ամեն օր հունական արարողությամբ պատարագ էր մատուցում, որին նա ջերմեռանդորեն ներկա էր գտնվում»* [65, էջ 161]:

1472թ. հակաօսմանյան զինակցության համատեղ ծրագրի համաձայն ակ-կոյունլուները նույն թվականին պատերազմ են սկսում թուրքերի դեմ: Ուզուն Հասանը որդուն՝ սուլթան Խալիլին, նշանակելով Շիրազի կառավարիչ, ինքը շարժվում է Օսմանյան կայսրության դեմ.

Իսկ Հասան-բէկ արի արքայն
Զթաղթըն տըւեալ՝ զՇիրազ այն,
Յորդին իւր՝ Խալիլ սուլթան՝
Պահել զկողմանս Արեւելեան:
Եւ դարձաւ ինքն յԱսորեստան [15, էջ 336]:

Պատերազմը նախապես ընթանում է ակ-կոյունլուների առավելությամբ [72, p. 412]: Ուզուն Հասանի բանակը գրավում է Տարոնի (Մուշի) բերդը, Դերջանի և Երզնկայի վրայով մտնում Թոխատ քաղաքը: Սակայն հենց այստեղ էլ պատերազմի նախնական հաջողություններին հաջորդեցին ծանր պարտությունները: 1472թ. սեպտեմբերին Կոնիայի մոտ՝ Բեհիսար վայրում, Ուզուն Հասանը ջախջախիչ պարտություն կրեց թուրքերից և կորցրեց որդիներից

[1] Դեսպինա խաթունը թաղված է Դիարբեքիրի Ս.Գևորգ եկեղեցում. *«Այս եկեղեցումն է նաև Դեսպինա (Despinacaton) խաթունի գերեզմանը, Տրապիզոնի թագավորի աղջիկը, Կալո Եանի (Caloianni) անունով»* [Մի վաճառականի ճանապարհորդությունը Պարսկաստանում, էջ 290, *Հակոբյան Հ.,* Ուղեգրություններ, էջ 286-330]:

երեքին [73, էջ 213]: Սակայն մինչևիսկ այս ծանր պարտությունը չկարողացավ ստիպել Ուզուն Հասանին դադարեցնել պայքարը: Նա կրկին փորձեց ապավինել դաշնակիցների աջակցությանը: Ասիայում դաշնակից պետություն չունենալով և ռազմականապես Օսմանյան կայսրությունից ավելի թույլ լինելով՝ Ուզուն Հասանը հարկադրված էր ապավինել Եվրոպային. *«Այս պարտությունից հետո (Կոնիա, 1472թ.) Հասան բեյ թագավորը մի դեսպան ուղարկեց Վենետիկ համոզելու համար, որ պատերազմեն թուրքի դեմ, քանի որ անձամբ իր դեմ է գալիս: Եվ բացի սրանից նրանցից խնդրեց հրետանի, որ քիչ ժամանակ հետո իրենց նավերով ուղարկեց Կիպրոս»* [74, էջ 256]:

Վենետիկի հանրապետությունը շատ արագ արձագանքեց Ուզուն Հասանի խնդրանքին: Հանրապետության սենատի 1473թ. փետրվարի 10-ի որոշմամբ Ջոզեֆա Բարբարոն դեսպան է նշանակվում Իրանում [58, էջ 16]: *«Պարսկաստանի դեսպան ընտրեցին Պ. Ջոզեֆա Բարբարոյին և բազմաթիվ նվերներով նրան ուղարկեցին թագավորին (իմա՝ Ուզուն Հասանին)»* [65, էջ 162]: Ջոզեֆա Բարբարոն հմուտ դիվանագետ էր՝ 1436-1451թթ. դեսպան էր եղել Մոսկովյան պետությունում [58, էջ 17]: Ռազմական օգնությունը՝ *«հրետանի, որոշ թվով ռումբեր, նետարձակներ, հրացան՝վառոդով, և ուրիշ զանազան տեսակի երկաթեղեններ, չորս հազար դուկատ արժողությամբ»* [74, էջ 256], *«վեց մեծ պաշարման թնդանոթ, հրահատներ (arquebuses) և մեծ թվով դաշտային հրանոթներ, վառոդ, և պատերազմական այլ ռազմանյութեր, վեց թնդանոթաձիգ, հարյուր հրացանակիր և հրետանու այլ վարժ մարդիկ»* [65, էջ 162-163], *«հրամանատարությամբ չորս կոմիսարների և մեկ կառավարչի, Թոմաս-Իմոլա անունով»* [65, էջ 176], Վենետիկից ուղարկվում է երկու մեծ և փոքր նավերով: Բարբարոն իր հետ ուներ նաև *«ծովում և ցամաքում ռազմական գործողությունների քարտեզներ, որոնց նպատակն էր Փոքր Ասիայի ազատագրումը»* [58, էջ 16]:

Պատերազմը նոր թափով վերսկսվեց 1473թ. գարնանը: Ուզուն Հասանը, *«Հայոց ՋԻԲ (1473) ամի (…) ասպատակեց ի Քրդստան, էառ զԲաղէշ եւ զԽլաթ եւ զՄուշ եւ զԲոհտանք, եւ բազում արեան հեղութիւն արարել գնաց յաշխարհն Հոռոմաց եւ ազգի չարութիւն հասոյց ի հետ ազգին տաճկաց»* [15, p. 344]:

Թշնամի բանակների միջև առաջին ճակատամարտը, որը տեղի ունեցավ Եփրատի ափին՝ Մալաթիայի մոտ, ավարտվեց Ուզուն Հասանի հաղթանակով [72, p. 412]: Սակայն պատերազմի նախնական տասնօրյա հաջողություններին հաջորդեցին ծանր պարտությունները [58, էջ 17-18]: Մինչ Բարբարոյի գլխավորած տորմիղը գտնվում էր դեպի Կիպրոս նավարկության մեջ, Ուզուն Հասանի «ճակատագրի գավաթը շրջվեց» և նրա բանակը Դերջանի դաշտում (12 օգոստոսի 1473թ.) պարտություն կրեց, որով էլ վճռվեց պատերազմի ընդհանուր ելքը [72, p. 412]:

Օսմանյան սուլթան Մուհամադ Բ Ֆաթիհը (1451-1481թթ.) *«եկ անձամբ (…) ընդէմ պարսից ութսուն հազար զօրօք (…) էանց յառաջ, եւ 'ի դիմի հարաւ ճակատու ուզուն հասանայ. եւ յետ բազում կոտորածի՝ որ եղեւ յերկոցունց կողմանց՝ ի պարտուի մատնեցաւ ուզուն հասան արքայ պարսից, եւ աճապարեաց ի փախուստ»* [18, էջ 510]: Սակայն Ուզուն Հասանը մտադիր չէր զենքը վայր դնել: Վենետիկի դոժին 1473թ. հոկտեմբերի 16-ին գրած նամակով նա պարտությունը պատճառաբանում էր հրազենի բացակայությամբ և հավաստիացնում, որ ապագայում էլ է պատերազմելու թուրքերի դեմ [58, էջ 18]: Նամակը Վենետիկ էր բերել Կատերինո Զենոն, որն այս անգամ հանդես էր գալիս որպես Պարսկաստանի բանագնաց [9, էջ 141-142]. *«Եվ որովհետև մեծագույն հույսը դրել էր քրիստոնյա իշխանների վրա, և որովհետև նա տեսնում էր, որ ինքը և նրանք միևնույն շահն ունեին, նա ուղարկեց Պ. Կատերինոյին՝ նամակներ տալով նրան ուղղված Եվրոպայի բոլոր թագավորներին, նրանցից օգնություն խնդրելու, պնդելով այն վտանգի մասին, որ երկու կողմերն էլ ունեին, և թե ինք զենք էր վերցրած Օսմանցիների դեմ, գլխավորապես մեր (Վենետիկի) հանրապետության և ուրիշ քրիստոնյա պետությունների դրդմամբ»* [65, էջ 167]:

Կատերինո Զենոն Վրաստանի վրայով անցնում է Սև ծովի հյուսիսային ափերը. *«շատ հոգնություններ կրելուց և շատ վտանգներ անցկացնելուց հետո, գնաց Լեհաստան և գտավ, որ Կազեմիր թագավորը* (իմա՝ Կազեմիր Դ 1447-1492թթ.) *կատաղի կռիվ էր մղում Հունգարիայի թագավորի դեմ»* [65, էջ 171]: Լեհաստանի արքայի արքունիքում նա հանդիպեց Վենետիկի դեսպան *«Պաուլո Օգնիպենեին (Paolo Ognibene), որ գնում էր Ուզուն Հասանի մոտ, որպես նվիրակ մեր կառավարության կողմից, և նրան նամակներ տվավ ուղղված թագավորին* /իմա՝ Ուզուն Հասանին/ *լի քաջալերանքով ու տաք խոսքերով (...) միևնույն կերպով գրեց Վրաստանի (Gorgora) թագավորին և Մենգրելիայի թագավոր Մելիքոյին (Melico), և Օգնիբենեին ողջերթ մաղթելուց հետո, մեկնեց դեպի Հունգարիա»* [65, էջ 172]:

1474թ. ապրիլին Հունգարիայում պատվով ընդունվում է Մատթեաս Կորվինուս (1458-1490թթ.) թագավորի կողմից, որը, անսալով Կատերինո Զենոյի հորդորներին, *«խոստացավ երբեք չլքել այնպիսի մի թագավորի, որ այնքան արժանի էր (օժանդակություն գտնելու) քրիստոնյա աշխարհից»* [65, էջ 173]:

Կատերինո Զենոն, մեկնելով Հունգարիայից, ժամանում է Վենետիկ, ուր *«ընդունվեց ամբողջ ազնվականության և ժողովրդի կողմից մեծ ցնծությամբ»* [65, էջ 173]: Ծերակույտը Կատերինո Զենոյի ունկնդրությունից հետո *«ընտրեց չորս դեսպաններ Պապին և Նապոլիի թագավորին, և նրանց հետ ուղարկեց Պ. Կատերինոյին որպես Պարսկաստանի թագավորի դեսպան, որ մյուսներից առաջնություն պետք է ունենար: Նրանք ծերակույտի կողմից ուղարկվեցին օգոստոսի 22-ին, հազար չորս հարյուր յոթանասուն չորս*

թվին» [65, էջ 173]: *«Եվ այս դեսպանների մեկնումից առաջ նրանք գրեցին Պ. Ջոզեֆա Բարբարոյին, որ Կիպրոսում էր»* [65, էջ 174]: Չնայած Կատերինո Զենոյի գործադրած ջանքերին և եվրոպական գահակալների հավաստիացումներին՝ թուրքերի դեմ համատեղ զինակցության կենսագործումից ոչինչ չստացվեց՝ *«իշխանների մեջ այդ ժամանակ տիրող դառն երկպառակության պատճառով»* [65, էջ 173]:

Ոչ մի արդյունք չունեցավ նաև Ամբրոսիո Կոնտարինիի դեսպանությունը՝ 13 փետրվարի 1474թ. - 16 ապրիլի 1477թ.: Հիշատակելի է, որ այս դեսպանությունը Կաֆայից մինչև Լոռի ուղեկցել էր իրեն որպես Ուզուն Հասանի դեսպան ներկայացնող մի հայ, իսկ ճանապարհի մի այլ հատվածում՝ ոմն հայ քահանա [65, էջ 77]: Ամբրոսիո Կոնտարինին Ջոզեֆո Բարբարոյի հետ Ուզուն Հասանի կողմից Սպահանում տեսակցության է արժանանում 1474թ. նոյեմբերի 4-ին [65, էջ 83]: Երկրորդ անգամ Ամբրոսիո Կոնտարինին Ուզուն Հասանի հետ պաշտոնական տեսակցություն է ունենում 1475թ. մայիսի 31-ին [75, էջ 239]:

Եվրոպայի հակաթուրքական ուժերի հետ դիվանագիտական աշխույժ հարաբերություններով հանդերձ Ուզուն Հասանը ծանր պարտությունից հետո նախընտրելի էր համարում խաղաղությունը Օսմանյան կայսրության հետ, քանի որ եվրոպացիների խոստումներին չէին հաջորդում իրական ռազմաքաղաքական քայլեր: Այս կապակցությամբ Ուզուն Հասանը մի առիթով ասել է Վենետիկի դեսպան Ամբրոսիո Կոնտարինիին. *«Ասեք ձեր ղեկավարներին (...) թող նրանք իրենց կողմից կատարեն իրենց /հանձն առած/ պարտականությունը, ինչպես ես անում եմ իմը»* [76, էջ 23]: Ուզուն Հասանը մինչև իսկ փորձ էր արել Ղադի Այլասքյարի դեսպանության միջոցով հաշտություն կնքել Օսմանյան կայսրության հետ, սակայն հաջողություն չէր ունեցել: Փորձ էր արել անգամ խնամիական կապեր հաստատել օսմանյան տիրակալների հետ և դարձյալ ապարդյուն: Ուզուն Հասանն իր նախկին քաղաքականությունը շարունակում էր ավելի շատ քաղաքական այլընտրանքի բացակայությունից ելնելով, քան որևէ իրական օգնության ակնկալիքով: Այդ իսկ պատճառով էլ Լուդովիկո դը Բոլոնյայի *«երկար ճառը (...) թվում էր, թե շատ քիչ ազդեցություն գործեց Շահի վրա»* [75, էջ 239]:

Կյանքի վերջին տարիներին, խուսափելով մեծ ընդհարումներից, Ուզուն Հասանն իր մայրամուտն անցկացրեց ասպատակությունների ու ավարառությունների մեջ. *«/ՌԴՀ/ՀԶ (1476) թւին Հասան բէկին գնաց զՎրաստուն, թալանէց ու անթիւ անձինք կոտորէց և գերի արար»* [77, էջ 194]:

Վրաստանում էլ Ուզուն Հասանը վիրավորվում է, վերադառնում և 1478թ. հունվարի 5-ին մահանում. *«Չարայչար մահուամբ սատակեցաւ, որպէս մանկակոտորն Հերովթէս անիծեալն»* [15, էջ 425]: Ուզուն Հասանի մահվամբ ակ-կոյունլուների հզորությունը թևակոխում է անկման փուլ:

4. Ակ-կոյունլուների տիրապետության անկումը Հայաստանում (1478 - 1501թթ.)

Ուզուն Հասանի մահից հետո նրա որդիների միջև ծայր առան գահակալական կռիվներ, որոնք ավելի քան երկու տասնամյակ Եվրոպային զրկեցին արևելյան դաշնակցից: Ուժերի հարաբերակցությունն էապես փոխվեց, և Վենետիկը հարկադրված էր 1479թ. Մուհամեդ II-ի հետ հաշտություն կնքել [27, p. 206-207]: 1483թ. զինադադար կնքեց Հունգարիան, 1484թ.՝ Մոլդավիան, 1489թ.՝ Լեհաստանը և Լիտվական պետությունը [78, c. 172]: Լեհաստանը նույնպես փորձում էր հարաբերությունները կարգավորել Օսմանյան կայսրության կամ նրա դաշնակիցների հետ: 1482թ. Ղրիմ է այցելում և տեղի խանի հետ բանակցություններ վարում Լեհաստանի դեսպան հայազգի Բոգդանը [79, էջ 28]:

Ուզուն Հասանին հաջորդեց անդրանիկ որդին՝ Խալիլը, որի դեմ վեց ամիս հետո ապստամբեց մյուս եղբայրը՝ Յաղուբը. *«Զկնի ուզուն հասանայ թագաւորեաց ՛ի վերա պարսից ՛ի դավրէժ որդի նորա խալիլ պէյ, ամիսս 6 ապա եաղուպ պէյ»* [18, էջ 510]:

Խոյի մոտ 1478թ. հուլիսի 15-ին տեղի ունեցած ճակատամարտում Խալիլը զոհվեց, և գահն անցավ Յաղուբին: Սակայն երկպառակություններից ուժասպառ երկիրն անշեղորեն գնում էր դեպի կործանում. *«Բազումք մահ խնդրեն անձանց իւրեանց ի բազմանալոյ անօրէնութեան»* [64, էջ 98]: Յաղուբը վաղաժամ վախճան ունեցավ. *«ՋԽ (1491) դեղով մեռաւ Ադուպ փաթշահ»* և երկիրը վերջնականապես գահավիժեց երկպառակության անդունդը [80, էջ 393]: Յաղուբին հաջորդած ակ-կոյունլու տիրակալները քաղաքական տարբեր խմբակցությունների կամակատարներն էին և ունեցան վաղանցիկ կառավարում:

XVI դարի սեմին ակ-կոյունլուների տրոհված և երկպառակությունից թուլացած պետությունն այլևս անկարող էր դիմակայել Սեֆյան ազգատոհմի հարաճուն հզորությանը: Ստեղծվել էին բոլոր նախադրյալները նոր՝ Սեֆյան հարստության հաղթանակի և գահակալության համար:

XV դ. վերջին և XVI դ. սկզբին սեֆյանները քաղաքական ասպարեզից դուրս մղեցին ակ-կոյունլու տիրակալներին, և Իսմայիլ I-ը (1502-1524թթ.) դարձավ նոր՝ Սեֆյան արքայատան, հիմնադիրը:

Սեպտեմբեր, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1955:
2. Պատմութիւն արշաւանաց և ասպատակութեանց զօրայ Լանկ-Թամուրի, ի Գրիգորէ Խլաթեցւոյ // Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979:

3. *Խաչիկյան Լ.Ս.,* Հայաստանի քաղաքական վիճակը և սոցիալ-տնտեսական հարաբերությունները XIV-XV դարերում // Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972:
4. *Петрушевский И.П.,* Кара-коюнлу государство, Советская историческая энциклопедия, т. 7, Москва, 1965.
5. Битвы мировой истории – Словарь, Москва, 1993.
6. Кондотьер в войнах Монголии и Волгу (1394-1427) // Каспийский транзит, т. I, Москва, 1996.
7. *Успенский Ф.И.,* История Византийской империи, Москва, 1997.
8. Ուղեգրություն Ռույ Գոնցալեց դի Կլավիխոյի (1403-1406թթ.) // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 65-146:
9. *Sykes P.*, A History of Persia, v. II, London, 1921.
10. *Шараф-хан ибн Шамсаддун Бидлиси,* Шараф-наме, т. II (перевод, предисловие, примечание и приложение Е.И. Васильевой), Москва, 1976.
11. *Օրմանյան Մ.,* Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914:
12. Stevans R., The Land of Great Sopy, London, 1962.
13. *Ակինյան Ն.,* Ազատութեան շարժումը ԺԵ-ԺԶ դարուն հայոց մէջ // Հանդէս ամսօրեայ, թիւ 1-12, 1917/18թթ.:
14. *Ибрагимов Дж.,* Феодальные государства на территории Азербайджана XV века, Баку, 1962.
15. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1958:
16. *Սրուանձտեանց Գ.,* Թորոս Աղբար, մասն Բ, Կ.Պոլիս, 1884:
17. *Эфендиев О.А.,* Образование Азербайджанского государства Сефевудов в начале XVI века, Баку, 1961.
18. *Չամչյանց Մ.,* Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1984:
19. *Магидович И.П., Магидович В.И.,* Очерки по истории географических открытий, т. II, Москва, 1983.
20. *Սավալանյանց Տ.,* Պատմութիւն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1931, հ. 1:
21. Филипп де Коммин, Мемуары, Москва, 1986.
22. Османская империя и страны Центральной, Восточной и Юго-Восточной Европы в XV-XVIвв, Москва, 1984.
23. Մեծն Վարդան Բաղիշեցի //Մանր մատենագիրք ԺԵ-ԺԹ դար, Դիվան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 69-82:
24. *Макьявелли Николо,* История Флоренции, Москва, 1987.
25. *Stavrianos L.S,* The Balkans since 1453, New York, 1966.
26. *Райт Дж. К.,* Географические представления в эпоху крестовых походов, Москва, 1988.
27. *Dorothy M. Vaughan,* Europe and the Turk, A Pattern of Alliance 1300-1700, Liverpool, 1954.
28. *Առաքել Բաղիշեցի,* Ողբ մայրաքաղաքին Ստամպօլու // Առաքել Բաղիշեցի, Քննական բնագրեր, Երևան, 1971:
29. *Փափազյանց Ի.,* Պատմութիւն եկեղեցիական հաւաքեալ յարժանահաւատ մատենագրաց, աշխատասիրութեամբ տեառն Իգնատիոսի վրդ. Փափազեանց Տարօնոյ Արքեպիսկոպոսի ի Մխիթարեան ուխտէն, Վէնետիկ, 1848:
30. *Ջաղացպանյան Ե.Դ.,* Բյուզանդիան կործանման նախօրեին // Պատմաբանասիրական հանդես, 1988, #2:

31. *Медведев И.П.,* К вопросу о принципах византийской дипломатии накануне падения нмперии [Византийский временник, 33, Москва, 1972, сс. 129-139].
32. *Гасратян М.А., Орешкова С.Ф., Петросян Ю.А.,* Очерки истории Турции, Москва, 1983.
33. *Պալճեան Ա.,* Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս եւ միութիւն նոցա ընդ հռոմէական եկեղեցւոյ ի փլորենտեան սիւնհոդոսի, Վիէննա, 1878:
34. *Հովհաննիսյան Աշ.,* Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. I, Երևան, 1957:
35. Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ, Փարիզ, 1860:
36. Թովմա Մեծոփեցի, Թովմա Մեծոփեցու յիշատակարանը, հրատարակեց իւր յառաջաբանով Կարապետ Կոստանեանց, Թիֆլիս, 1892:
37. *Ներսես Շնորհալի,* Ողբ Եդեսիոյ, Երևան, 1973:
38. Ուղեգրություն Ուիլյամ Ռուբրուքի (1253-1255թթ.) // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 1-33:
39. *Երեմիա Քեսմիրճեան,* Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն, Երևան, 1982:
40. После Марко Поло, Путешествия западных чужеземцев в страны трех Индий (перевод с латинского и староитальянского языков, введение и примечания Я.М. Света), Москва, 1968.
41. *Арш Г.Л., Виноградов В.Н., Достян И.С., Наумов Е.П.,* Балканы в международной жизни Европы /XV-начало XX века // Вопросы истории, 1981, 4, сс. 30-42.
42. *Шахмалиев Э.,* Франко-венецианское торговое соперничество на Переднем Востоке первой половины XVI века // Ученные записки АзГУ, 1957, 5, сс. 79-85.
43. *Базылев Л.,* Польско-турецкие дипломатические связи в XVI веке // Сборник статей - Россия, Польша и Причерноморье в XV-XVIII вв., Москва, 1979, сс. 12-28.
44. *Райт Дж. К.,* Географические Представления в эпоху крестовых походов, Москва, 1988 // Տե՛ս *Соколов Н.П.,* Образование Венецианской колониальной империи, Саратов, 1963, стр. 409-445; *Соколов Н.П.,* Торговые взаимоотношения Венеции и Киликийской Армении в XII-XIV вв., Горький, 1973, стр. 5-24.
45. *Рутенбург В.И.,* Италия и Европа накануне нового времени, Ленинград, 1974.
46. *Канделоро Джорджо,* История современной Италии, Москва, 1958.
47. *Кулишер И.М.,* История экономического быта Западной Европы, т. 2, Москва-Ленинград, 1931.
48. Շիլթպերկէր, Յովհաննէս Շիլթպերկէրի ուղեւորութիւնը ի Հայաստան (թարգմ. Հ. Ֆոկոլեան), էջ 239; Բազմավէպ, 1959, թիւ 11-12, էջ 239-247:
49. *Plaut Steven E.,* The Middle East and the Venice Model of Development // Mediterranean Quarterly, Summer, 1996, pp. 72-86.
50. *Гордлевский В.А.,* Государство Сельджукидов в Малой Азии // Гордлевсий В.А., Избранные сочинения, т. I, Москва, 1960, сс. 31-321.
51. *Yale William,* The Near East, New York, 1958.
52. *Mazzaouni M.,* The Origins of the Safawids, Wiesbaden, 1972.
53. Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 1, Երևան, 1969:
54. *Карпов С.П.,* Трапезундская империя и западно-европейские государства в 13 - 15 вв., Москва, 1981.
55. *Տմաշէկ Վ.,* Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները, մասն Ա, Վիեննա, 1896:
56. *Миллер А.Ф.,* Мустафа паша Байрактар, Москва-Ленинград, 1947.
57. Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն, Երևան, 1973 :

58. Ասնադ-ե մարբութ բե ռավաբեթ-ե թարիխ-ի Իրան վա Զոմհուրի-յե Վենեզ ազ դոռե-յե իլխանան թա ասրե սեֆնի (Իրանի և Վենետիկի հանրապետության պատմական կապերին վերաբերող փաստաթղթեր՝ սկսած իլխանությունների ժամանակաշրջանից մինչև սեֆյաններ) /աշխատասիրությամբ Իրաջ Անվարիի և Ղոդրաթուլլահ Ռոշանիի/, Թեհրան, 1352/1973 [պարսկերեն]:
59. *Зонненшталь-Пискорский А.А.,* Международные торговые договоры Персии, Москва, 1931.
60. *Абидова М.,* Государство Ак-коюнлу в Иране во второй половине 15-ого века, Автореферат дисс. на соискание уч. степени кандидата ист. наук, Ленинград, 1953.
61. Զեքիյան Լ. Խոջա Սաֆար՝ շահ Աբասի դեսպան Վենետիկի մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1983, #1:
62. Ուղեգրություն Ջոզեֆա Բարբարոյի (1471-1478թթ.) // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 175-214:
63. *Ամատյան Հ., Մանանդյան Հ.,* Հայոց նոր վկաները, հ. Բ, Վաղարշապատ, 1902 (Վկայաբանության ռուսերեն թարգմանությունն առկա է հետևյալ գրքում՝ Армянские жития и мученичество (Перевод с древнеармянского, вступительные статьи и примечания - Тер-Даврян К.С., Ереван, 1994, стр. 399-405).
64. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1967:
65. Ուղեգրություն Կատերինո Զենոյի (1471-1474թթ.) // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 153-174:
66. *Ալիշան Ղ.,* Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց և վենետաց ի ԺԳ-Դ և ԺԵ-Զ դարս, Վենետիկ, Ս. Ղազար, 1896:
67. *Կյուլպենկյան Ռ.Վ.,* Հայաստանի և Փորթուկալի հարաբերությունները սկիզբեն մինչև միջին դարերու վերջը, Երևան, 1986:
68. *Աբրահամյան Ա.,* Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964:
69. *Борисов Н.С.,* Русская церковь в политической борьбе XIV-XV веков, Москва, 1986.
70. *Греков И.Б.,* Очерки по истории международных отношений Восточной Европы XIV-XVI вв. Москва, 1963.
71. *Махмудов Я.М.,* К вопросу о взаимоотношениях государств Ак-коюнлу и Сефевидов с европейскими странами- вторая половина XV-начало XVII века // Известия АН АзССР, 1987, 3.
72. *Browne E. G.,* A History of Persian Literature under Tartar Domination (A.D. 1265-1502), Cambridge, 1920.
73. *Այվազովսկի Գ.,* Պատմութիւն Օսմանեան Պետութեան, հ. Ա, Վենետիկ, 1841:
74. Ուղեգրություն Ջիովան Մարիա Անջիոլելլոյի // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 255-285:
75. Ուղեգրություն Ամբրոսիո Կոնտարինիի (1473-1477թթ.) // Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 215-254:
76. *Զուլալյան Մ.Կ.,* Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990:
77. Հակոբ Հիսուսիին վերագրված ժամանակագրությունը (XV, XVIIդդ.), էջ 194 // Մանր ժամանակագրություններ XIII-XVIIIդդ., հ. Ա, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1951, էջ 189 – 200:
78. *Хорошкевич А.Л.,* Русское государство в системе международных отношений, Москва, 1980.

79. *Ոսկանյան Վ.Կ.,* Հայերը Մոսկվայում XV-XVII դարերում // Պատմա-բանասիրական հանդես, 1971, #1, էջ 25-40:
80. Ժամանակագրական մանր հատվածներ // Մանր ժամանակագրություններ, հ. Ա, Երևան, 1951, էջ 387-401:

ДИПЛОМАТИЧЕСКИЕ УСИЛИЯ ПО СОЗДАНИЮ ЕДИНОЙ АНТИТУРЕЦКОЙ КОАЛИЦИИ И УЧАСТИЕ АРМЯН В ЭТОЙ БОРЬБЕ

(эпоха правления туркменских племен ак-коюнлу и кара-коюнлу – XV век)

Ара Папян

Резюме

Туркменские кочевые племена ак-коюнлу и кара-коюнлу (от ак – белый, кара – черный и коюн – баран, овца) переселились в Армению, Атропатену и в северную Месопотамию в конце XIII века. В течение XIV-XV веков они вели ожесточенную и непримиримую борьбу за полный контроль над регионом. Противостояние обострялось тем, что каждый из племенных союзов был вовлечен в сферу влияния противоборствующих стран, среди которых эти племена искали союзников. Это противостояние характеризовалось периодическими вспышками ожесточенных боевых действий.

Захват в 1453г. турками-османами Константинополя и падение в 1461г. Трапезундской империи коренным образом изменили международные отношения и оставили глубокий след на политическом мышлении христиан. Идея освобождения Святой Земли постепенно уступила место идее противостояния туркам, освобождения Константинополя и восточных христиан. Эта новая идея требовала объединения всех антитурецких сил как на Западе, так и на Востоке.

Новая геополитическая ситуация поставила под удар также торговые интересы ряда стран и группировок. Армяне, державшие в своих руках основную часть торговли между Западом и Востоком, быстро втянулись в сферу дипломатии и играли важную роль в попытках создания антитурецкой коалиции. Однако эти усилия были малоэффективными и к началу XVI века туркменские племена полностью уступили политическую арену Османской империи и Сефевидскому Ирану.